ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԺ ներկայացված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«~~Քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում քննության ենթակա օ~~Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները բաշխվում են Դատարանների նախագահների խորհրդի կողմից որոշված դատավորների միջև:».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գործերի հանձնումը դատարանների նախագահներին, Արդարադատության խորհրդի, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի և ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորներին կատարվում է ընդհանուր կարգով, սակայն յուրաքանչյուր ամիս դատարանների նախագահներին՝ բացառությամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահին, հանձնված գործերի քանակը պետք է մինչև տասը տոկոսով, իսկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահին, Արդարադատության խորհրդի, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի և ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորներին՝ մինչև 25 տոկոսով պակաս լինի տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող մեկ դատավորին նախորդ 6 ամսվա ընթացքում հանձնված գործերի ամսական միջին քանակից:».

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. ~~Քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում քննության ենթակա օ~~Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորներին հանձնվող գործերի քանակը տվյալ դատարանի մեկ դատավորին նախորդ 6 ամսվա ընթացքում հանձնված գործերի ամսական միջին քանակից կարող է պակաս լինել Դատարանների նախագահների խորհրդի սահմանած չափով:».

4) 6-րդ մասից հանել «, իսկ բացառիկ դեպքերում՝ 1 տարին» բառերը.

5) 7-րդ մասում «(ներառյալ՝ արձակուրդին նախորդող 20-օրյա ժամանակահատվածը)» բառերը փոխարինել «(ներառյալ՝ արձակուրդին նախորդող 10-օրյա ժամանակահատվածը)» բառերով, իսկ «(ներառյալ՝ գործուղմանը նախորդող 20-օրյա ժամանակահատվածը և գործուղման ժամկետի ավարտին

նախորդող 30-օրյա ժամանակահատվածը)» բառերը փոխարինել «(ներառյալ՝ գործուղմանը նախորդող 10-օրյա ժամանակահատվածը)» բառերով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ և 15-րդ մասեր.

«14. Սույն հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով սահմանված պահանջները կիրառելի չեն Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում գործերի բաշխման կարգի նկատմամբ:

15. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործերը, որպես կանոն, -բաշխվում են դատարանի այն նստավայրի դատավորների միջև, որի սպասարկման տարածքում գործող՝ Հայաստանի Հանրապետության դատախազության համապատասխան ստորաբաժանումից ստացվել է քրեական գործը, եթե դրանով չեն խախտվում սույն հոդվածի 1-ին մասի պահանջները:»:

Հոդված 2. Օրենսգրքի 24-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Երևան քաղաքում գործում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 65 դատավորի կազմով:».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կենտրոնական նստավայրը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանն ունի այլ նստավայրեր Երևան քաղաքի վարչական տարածքում: Քաղաքացիական ~~Գ~~գործի հարուցումից ~~Ա~~կամ քրեական գործը դատարանում ստացվելուց հետո տվյալ գործով փաստաթղթերը հանձնվում են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի այն նստավայրում, որտեղ քննվում է գործը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 25-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-րդ կետ.

«9.1) հաստատում է քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահությունների ժամանակացույցը և Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է ժամանակացույցով հերթապահությանը ներգրավված դատավորների նստավայրերը.»:

Հոդված 4. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետ.

«4.1) հաստատում է քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների համար հերթապահություն սահմանելու կարգը.».

2) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) սահմանում է դատարանների՝ օրենքով չսահմանված նստավայրերը, դրանց սպասարկման տարածքները և հաստատում է դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը.»:

Հոդված 5. Օրենսգրքի 76-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 76. Դատավորի արձակուրդը

1. Դատավորն ունի ամենամյա հերթական վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ:

2. Դատավորին ամենամյա հերթական արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ չխոչընդոտվի դատարանի բնականոն գործունեության իրականացումը:

Դատավորին ամենամյա հերթական արձակուրդ կարող է տրամադրվել մասերով, բայց ոչ ավել, քան երեք մասով:

3. Դատարանի նախագահը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը հաստատում է դատավորների ամենամյա հերթական արձակուրդի ժամանակացույցը և հրապարակում Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Հաստատված ժամանակացույցին չհամապատասխանող ժամանակահատվածում արձակուրդ տրամադրելու և դրա պատճառների մասին տվյալ դատարանի նախագահն իրազեկում է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին:

4. Առանձին դեպքերում, անձնական կամ ընտանեկան հանգամանքներից ելնելով, դատարանի նախագահի կողմից դատավորին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ տարեկան հանրագումարային մինչև 20 աշխատանքային օր տևողությամբ:

5. Գիտական ատենախոսություն պաշտպանելու նպատակով դատավորն ունի մինչև 30 աշխատանքային օր տևողությամբ չվճարվող արձակուրդի իրավունք:

6. Արձակուրդի տրամադրման հետ կապված վեճերը կարող են լուծվել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից:

7. Դատավորներին արձակուրդ տրամադրելու կարգը սահմանվում է Դատարանների նախագահների խորհրդի որոշմամբ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 139-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար իրավագիտության բնագավառում գիտական աստիճան, իսկ վճռաբեկ

դատարանում դատավոր նշանակվելու համար իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և համապատասխանաբար վերջին ութ և տասը տարիների ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատություններում մշտապես իրավունք դասավանդող կամ գիտական հաստատությունում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (ստորև՝ գիտնականներ) կարող են ընդգրկվել դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակներում՝ սույն հոդվածով սահմանված կարգով:».

2) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) գիտնականի կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իր կողմից իրականացված գիտական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցները, ինչպես նաև գիտական աշխատությունների և հրապարակումների ցանկը.».

3) 4-րդ մասում՝

ա) 1-ին նախադասությունում «միայն վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակում» բառերը փոխարինել «վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակներում» բառերով.

բ) 5-րդ նախադասությունում «վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակում» բառերը փոխարինել «վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակներում» բառերով:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված գիտնականների համար Արդարադատության ակադեմիայում կազմակերպվում է ուսուցում գործնական հմտությունների զարգացման մասով:»:

Հոդված 7. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Երևան քաղաքի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանները շարունակում են գործել որպես Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, իսկ դատարանների նախագահները և դատավորները շարունակում են պաշտոնավարել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում և շարունակում են քննել իրենց վարույթներում եղած գործերը:

3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահը նշանակվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների թվակազմից:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահն իրականացնում է Դատական դեպարտամենտի կառուցվածքի փոփոխություն:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Դատարանների նախագահների խորհրդի նախագահը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների թվակազմից նշանակում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Դատարանների նախագահների խորհուրդը՝

~~1) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների թվակազմից նշանակում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար,~~

~~2~~1) փոփոխում է դատարանների նախագահներին հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափերը,

~~3~~2) սահմանում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրենքով չսահմանված նստավայրերը, դրանց սպասարկման տարածքները և հաստատում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը,

~~4~~3) փոփոխում է դատարանների գործավարության կանոնները,

~~5~~4) հաստատում է քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների համար հերթապահություն սահմանելու կարգը,

~~6~~5) սահմանում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների կնիքների և դրոշմակնիքների գծապատկերները:

~~6~~7. Մինչև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին կնիքների և դրոշմակնիքների տրամադրումը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներն օգտագործում են մինչ այդ որպես Երևան քաղաքի վարչական շրջանի դատարանի դատավոր ունեցած կնիքները և դրոշմակնիքները: